

ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔԻ ՔԱՐԱՆՁԱԻ ԱՆԱՊԱՏԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ  
ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ ԺԲ ԴԱՐՈՒՄ

Աշոտ Մանուչարեան

Սաղմոսավանքից Յովհաննավանք ձգող Քասաղի անդնդախոր կիրճի Սերկելիի ձորի հատուածը կոչուում է Վասակամուտ: Անուանումը կապուած է Բջնիի տէր Վասակ Հոլում Պահլաուուի իշխանաց իշխանի հետ: Բանն այն է, որ «1021 թ. Ատրպատականից Հայաստան խուժեցին դայլամցիների (դելմիկների) մօտ ծառայող թուրքերը, որոնք Դուխնի վրայով հասան մինչեւ Նիգ (Ապարան) գաւառը, ամէնուրեք սիւռելով աւեր եւ կողոպուտ: Նրանց դէմ դուրս եկաւ Բջնիի տէր Վասակ Պահլաուուի իշխանը, որը քաջ զօրավար էր: Նա հեծելագործի գլուխ անցած ճակատամարտեց ասպատակողների դէմ, Քասաղ գետի ափին, Սաղմոսավանքից ոչ հեռու, Սերկելիի կոչուող վայրում եւ թշնամիներից կոտորելով երեք հարիւր զինուոր՝ նահանջի մատնեց նրանց, բայց ինքն էլ պատահաբար սպանուեց անյայտ մէկի ձեռքով»<sup>1</sup>, երբ մարտից յոգնած բարձրացել էր լեռը՝ հանգստանալու, ու քնով էր անցել<sup>2</sup>: Սերկելիի մարտում զոհուած հայորդիների (որոնց թոււմ պէտք է ենթադրել նաեւ Վասակ Պահլաուուու) ու Հասան անուանով մի զօրականի յիշատակին 1033 թ. կերտուել է փոքրիկ խաչքար<sup>3</sup>, որը յետագա-

յում տարուել է Յովհաննավանք եւ դրուել գաւթում:

Համաձայն 1195 թ. ընդօրինակուած ձեռագրի յիշատակարանի՝ Վասակամուտում «մերձ ի վանս Սաղմոսի ըստ չափոյ խարմանի<sup>4</sup> ճանապարհի», ժԲ դ. երկրորդ կէսից յետոյ Յովհաննէս Մուկնջ անուանով մի կրօնաւոր կիրճի ձախակողմեան լանջի քարանձաւախմբում հիմնել է անապատ<sup>5</sup>, իր շուրջը հաւաքել ճգնաւորների, ուսուցանել՝ դառնալով նրանց առաջնորդը: Զեռագիրն ընդօրինակող Մարկոս Միտանի գրիչն ամենայն դրուատանքով է խօսում իր ուսուցչի՝ Յովհաննէս Մուկնջի մասին՝ նրան կոչելով մարդ, ով զարգարուած էր պատուիրանապահութեան ողջ առաքինութեամբ, եւ ում Տէր Յիսուս դասել էր իր սրբերի շարքը<sup>6</sup>:

4 Խարման բառը ծագում է արաբ. مخرج (խարամ) արմատի II մասդարայիմ-դերբայական ձեւից, որն ունի «կարճ ճանապարհ գնալ» իմաստը:  
5 Անապատ է կոչում հասարակութիւնից եւ բնակավայրերից մեկուսացուած քրիստոնէայ ճգնաւորների մեմաստանը (տե՛ս «Քրիստոնէայ Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 55): Վաղ քրիստոնէական ճգնաւորական շարժումը ծաւալուել է առաւելապէս Եգիպտոսում, որտեղ ճգնակեցութեան պատրաստողները, մերժելով աշխարհիկ կեանքը, լքում էին իրենց բնակավայրերը եւ մեկուսանում բնութեան գրկում՝ Աստուծոյ ինքնանուիրուելու: Քանի որ Եգիպտոսում բնութիւնը հիմնականում անապատային է, հետեւապէս ճգնաւորների հիմնադրած մեմաստանները կոչուեցին անապատներ:  
6 Տե՛ս Գարեգին Ա կաթողիկոս, Յիշատակարանը ձեռագրաց, հտ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 544 (այսուհետեւ՝ Յիշատակարանը ձեռագրաց), նաեւ՝ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե-ԺԲ դր., աշխ. Ա. Մաթեոսեանի, Երեւան, 1988, էջ 282:

1 Հայ ժողովրդի պատմութիւն, ԳԱ հրատ., հտ. III, Երեւան, 1976, էջ 145 (այսուհետեւ՝ ՀԺՊ, III):  
2 Տե՛ս Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, գրաբար բնագիրը Մ. Մելիք-Աղամեանի եւ Ն. Տէր-Միքայէլեանի, աշխ. թարգմ. եւ ծանօթ. Հ. Բարթիկեանի, Երեւան, 1991, էջ 18-19:  
3 Տե՛ս Ա. Մանուչարեան, Նոր փնտրութիւն Յովհաննավանքից, ՀՀ ԳԱԱ ՕՀՀԿ, գիտ. աշխ., Գիտքի, 2013, էջ 90:

Եթէ այստեղ մուգ բառը հասկանանք իր ուղղակի իմաստով՝ համր<sup>7</sup>, ապա պէտք է ընդգծենք այն կարեւոր հանգամանքը, որ ըստ ընդհանրական եկեղեցու նշանաւոր հայրապետ ս. Բարսեղ Կեսարացու (329-379) կանոնախմբի ԻԴ կանոնի. «Այր խուլ կամ համր մի՛ իշխեսցէ կալ ի կարգի քահանայութեան, թէ ոք յանդգնի՝ եղիցի նզովեալ»<sup>8</sup>: Հետեւապէս, մուգ բառը հարկ է ընկալել լուսկեաց, սուս ու փուս նշանակութեամբ, մարդ, ով տոկունութեամբ, լուռ ու մուկ տանում է ճգնաւորի ասկետական կեանքի բոլոր դժուարութիւնները:

Ինչ վերաբերում է ձեռագիրն ընդօրինակող Մարկոս Միտանուն, ով կաղ է եղել (ինչպէս յետոյ կը տեսնենք, մի ուրիշ տեղ նա նշում է, որ իր մի ոտքը «կարճեալ» էր), ապա հարկ է նշել, որ, եթէ կրօնաւորը հաշմանդամ է դարձել Տիրոջ ինքնանուիրուելու, ծառայելու ընթացքում, նոյն «կանոնք Բասղի Կեսարացու» ժԼ կանոնով քահանայութիւնը թոյլատրելի է. «Քահանայ կամ սարկաւազ թէ կաղանայ կամ կուրանայ եւ այլ վարքն սուրբ են, արժան է կալ յաշտիճանի»<sup>9</sup>:

Յովհաննէս Մուկնջի կողմից ընտրուած գողտրիկ տեղանքը միանգամայն յարմար վայր էր սելջուկեան տիրապետութեան դժնդակ տարիների խաւարի մէջ գիտութեան ջանք վառելու, հոգեւոր, կրթամշակութային, գրչական գործունէութիւն իրագործելու համար: Ակնյայտօրէն համազգային մտածողութեամբ օժտուած Յովհաննէս Մուկնջի ջանքերին, անշուշտ, մեծ ոգեւորութիւն էին հաղորդում ազգակիցների յաջողութիւնները հեռաւոր Կիլիկիայում, Գրիգոր Գ Պահլաուուի կաթողի-

7 Տե՛ս Հայերէն բացատրական բառարան, կազմեց Ստ. Մալխասեանց, հտ. III, Երեւան, 1944, էջ 364:  
8 Կանոնագիրք հայոց, հտ. Բ, աշխ. Վ. Յակոբեանի, Երեւան, 1971, էջ 107:  
9 Նոյն տեղում, էջ 105:

կոսի (1113-1166), ս. Ներսէս Շնորհալի հայրապետի (1166-1174) եկեղեցաշէն գործերը, Ռուբինեան իշխանապետերի կողմից հայոց անկախ պետականութեան հիմքերի կերտումը:

Մուկնջն անապատի համար ընտրել է Քասաղի ձախ ափին գտնուող կրկնայարկ քարանձաւները: Ըստ քարանձաւագէտ է. Սարգսեանի՝ դրանց «առաջին յարկը փորուած է դեղին տուֆի, իսկ երկրորդը՝ կոնգլոմերատի մէջ»<sup>10</sup>:

Տեղացիներն այդ քարանձաւային համալիրը կոչում են Կարմիր վանք՝ տեղի ժայռափոր մատուռի ներսի պատերին ու առաստաղին կարմիր ներկով արուած որմնակարների հետքերի պատճառով<sup>11</sup>: Այդ վայրը թէեւ աւելի մօտ է գտնուում Սերկելի կամ Սերկելիի գիւղատեղիին ու Օհանաւան գիւղին, բայց, ինչպէս նշում է Պատմամշակութային ժառանգութեան գիտահետազօտական կենտրոնի գիտաշխատող Ա. Ասատրեանը. «12-րդ դարում այստեղ գրուած ձեռագրի յիշատակարանում... նշուել է յանապատ Քարանձախի, որ է մերձ ի վանս Սաղմոսի»<sup>12</sup>: Հետեւաբար, սելջուկեան տիրապետութեան շրջանում Սաղմոսավանքն Արագածոտնում առուել հռչակուած է եղել, իսկ կիրճի այդ տեղանքն էլ պատկանել է նրան:

Երկյարկանի քարանձախի առաջին յարկում, Ա. Ասատրեանի գնահատմամբ, «հիմնականում եղել են բնակարաններ եւ

10 Է. Սարգսեան, Քասախի կիրճի ժայռափոր կառոյցները, «Գիտութիւն եւ տեխնիկա», Երեւան, 1980, թիւ 12, էջ 7: Կոնգլոմերատը նստածքային ապար է, որի խառնուրդում սովորաբար լինում է աւազ, խճաքար, գլաքար (տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 5, Երեւան, 1979, էջ 564):  
11 Տե՛ս Է. Սարգսեան, Քասախի կիրճի ժայռափոր կառոյցները, էջ 8:  
12 Ա. Ասատրեան, Օհանավանի ժայռափոր եկեղեցիները, «Հայոց աշխարհ» օրաթերթ, 19 մայիսի 2011, էջ 7:

տնտեսական շինություններ, իսկ երկրորդը պաշտպանական դեր է կատարել»<sup>13</sup>:

Է. Սարգսեանի նկարագրութեամբ, «առաջին յարկի աջ կողմում փոքրիկ խուց է, նրանից ձախ՝ գմբեթաձեւ առաստաղով սենեակ, որն ունի երկու ծխապատ խորշեր եւ միացած է յաջորդ սենեակի՝ թոնրատան հետ: Պահպանուել են երկու մեծ ու փոքր թոնիրները եւ երկու սանդերը: Պատերի մէջ կան կենցաղային խորշեր...

Մատուռից ձախ տեղաւորուած է շտեմարանը իր մեծ ու փոքր հորերով: Սա միաժամանակ եղել է նաեւ բնակելի սենեակ. այդ են վկայում ճրագի ծխից սեւացած պատերն ու անկողին տեղաւորելու խորշերը:



(Առաջին յարկի) նախավերջին սենեակը գմբեթաձեւ առաստաղով մի մեծ կլոր դահլիճ է..., սա եղել է գլխաւոր բնակելի սենեակը եւ ունի երեք մեծ անկողնային խորշեր: Մուտքի դիմաց գտնուում է վերջին սենեակը, որը հաւանաբար ննջարան է եղել: Բոլոր սենեակները սրբատաշ են:

Երկրորդ յարկը բաղկացած է երեք առանձին հատուածներից»<sup>14</sup>: Ամենաընդարձակ հատուած կարելի է մագլցել պարանի օգնութեամբ՝ առաջին յարկի ամենամեծ գմբեթաձեւ առաստաղով կլորուուն քարանձաւի ներսից ուղղահայեացորէն փորուած մօտ 10-մետրանոց խողովակաձեւ անցուղու միջով: Վերելից անցուղին «ծածկուել է կափարիչով: Այս ամրութիւնը բարձր առաստաղով շատ մեծ, գեղեցիկ դահլիճ է, որի պատերի երկարութեամբ բազմաթիւ կեղծ խորաններ են փորուած, իսկ խորքում թոնիրն է: Առջեւի արհեստական պատը հիմնովին աւերուած է: Կենտրոնական ամրութիւնը բաղկացած է հինգ սենեակներից եւ նրանց առջեւով

13 Նոյն տեղում:

14 Է. Սարգսեան, Քասախի կիրճի ժայռափոր կառոյցները, էջ 7-8:

ձգուող երկար միջանցքից: Ի տարբերութիւն նախորդի, այս առաստաղը բաւականին ցածր է՝ մէկուկէս մետր: Աջակողմեան ամրութիւնը բաղկացած է երկու սենեակներից եւ մի քանի փոքր խցերից»<sup>15</sup>:



Քարանձաւային անցքի և երկրորդ յարկերի յատակագծերն ըստ Է. Սարգսեանի

Միւս ձեռագրի՝ «Ճառընտիրի» յիշատակարանում նոյն Մարկոս գրիչն ակնարկում է Սաղմոսավանքի չորս եկեղեցիների մասին՝ Ս. Գրիգորիս, Ս. Աստուածածին, Կարապետ, Գէորգայ զօրավարի<sup>16</sup>: Առաջինը Սաղմոսավանքի կիրճի Ս. Գրիգոր Լուսաւորիչ անապատն է, իսկ երկրորդը՝ Ս. Աստուածածինը՝ Քարանձաւի անապատի վիմափոր եկեղեցին:

Ա. Ասատրեանի նկարագրութեամբ՝ Ս. Աստուածածին ժայռափոր եկեղեցու «մուտքը արեւմուտքից է ուղղանկիւն տեսքով եւ մակերեւոյթից ունի փոքր բարձրութիւն: Նրա վերջին մասում բացուած է անցք՝ սրահը լուսաւորելու համար: Արեւելեան կողմում խորանն է՝ բեմահարթակով, որը սրահին միանում է երկկողմ աստիճաններով: Սրահը ուղղանկիւն է՝ գմբեթաձեւով:


15 Նոյն տեղում, էջ 8:

16 Տե՛ս «Արարատ», Ս. Էջմիածին, 1896, թիւ 9, էջ 438, նաեւ՝ Յիշատակարանը ձեռագրաց, էջ 508, Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե-ԺԲ դր., էջ 285:

Եկեղեցու պատերն ու առաստաղը մշակուած են, պատած ծեփով, որոնց վրայ նշմարուած են կարմիր ներկով արուած երկրաչափական պատկերներ եւ հայերէն արձանագրութեան հետքեր:

Պատերին կան նաեւ 13-րդ դարին բնորոշ փորագիր խաչեր»<sup>17</sup>:

Եկեղեցու հարաւային պատին՝ երեք եղծուած խաչաքանդակներից աջի վերելոււմ, դժուարութեամբ կարդացուում է.



Խ[Ա]Չ[Ա] ՄԱՐ[Կ]ՈՍ/ ԻՆ, / Թ[ՈՒՒՆ] ՈՒՆԷ (1196):

Թուականը՝ ՈՒՆԷ, հազիւ է նշմարուում: Անունն ու ժամանակը լիովին համընկնում են Մարկոս գրչին:

ԺԼ դ. Ս. Աստուածածինը Սաղմոսավանքի չորս ուխտավայրերից մէկն էր<sup>18</sup>:

Դատելով 1195 թ. ընդօրինակուած ձեռագրի յիշատակարանից՝ Յովհաննէս Մունջին Քարանձաւի անապատի առաջնորդի հոգեւոր պաշտօնում յաջորդել է նրա աշակերտներից Յովհաննէսը, ով մանուկ հասակից մեծացել ու կրթուել է այդ մենաստանում: Մարկոս Միտանի գրիչը բարձր է գնահատում իր աշակերտակից ճգնաւոր ընկերոջը՝ նրան պատկերաւոր անուանելով մաճակալ եւ ժիր մշակ, ինչը շատ խօսուել կերպով ու լիարժէքօրէն բնութագրում է նրան, բացայայտում նրա կերպարը: Մաճակալը նոյն մաճակալն է՝ «մաճ բռնող, վար անող: Գութանի գլխաւոր դեկավարն է մաճակալը: Բոլոր հօտաղ-

ները, որ քշում են եզները՝ հետեւում են մաճակալի հրամանին»<sup>19</sup>: Տուեալ դէպքում Յովհաննէս կուսակրօն քահանայն իր լծակից կրօնաւոր եղբայրների առաջնորդն է: Նա այդ ձեռագրի ստացողն է՝ պատուիրատուն. իր ընկերոջը՝ կուսակրօն քահանայ Մարկոսին, պատուիրել է ընդօրինակել ընդհանրական եկեղեցու նշանաւոր հայրապետ ս. Կիւրեղ Երուսաղէմացու (315-386) մատենագրական ժառանգութեան գլուխգործոցը՝ «Կոչումն ընծայութեան» աշխատութիւնը: Երբ վերծանում ենք այդ ձեռագրի արտագրութեան ժամանակը՝ ՈՒՆԳ-ՈՒՆԴ (1194-1195), տեսնում ենք, որ թեման պատահական չէ ընտրուած:

Դա մի ժամանակաշրջան էր, երբ Զաքարէ եւ Իւանէ Զաքարեան եղբայրները սելջուկ-թուրքական տիրապետութիւնից ազատագրում էին Նիգ, Արագածոտն, Ամբերդ գաւառները (ըստ մատենավիմագրական տուեալների՝ 1191-1196 թթ. ընթացքում)<sup>20</sup>: Իսկ «Կիւրղի Երուսաղէմացույ կոչումն ընծայութեան» երկասիրութիւնը, որը կոչուել է նաեւ «Յաղագս երախայից» եւ հայերէն է թարգմանուել դեռեւս Ե դ., «24 ճառերի կամ քարոզների (հայերէն թարգմանութիւնը, որ ամենայն հաւանականութեամբ կատարուել է ասորերէնից, պարունակում է 18 ճառ) ժողովածու է, որը հոգեւոր գիտելիքների եւ քրիստոնէական հաւատի իւրօրինակ հանրագիտարան է եղել նորադարձ քրիստոնեաների համար:

Կիւրեղ Երուսաղէմցին այդ քարոզներն արտասանել է 347-348-ին, երբ դեռ քարոզիչ քահանայ էր Երուսաղէմի Ս. Յարութիւն տաճարում, եւ դրանք ունեցել են ուսուցող-դաստիարակչական նշանակութիւն չմկրտուած («երախայ») նորադարձ

19 Հայերէն բացատրական բառարան, հտ. III, էջ 245:

20 Ա. Մանուչարեան, Փարսիի Ծիրանաւորի արձանագրութիւնները, «Էջմիածին», 2014, Գ, էջ 136:

17 Ա. Ասատրեան, Աշ. աշխ. էջ 7:

18 Տե՛ս Սիմէոն կաթողիկոս Երեւանցի, Ջամբո, Երեւան, 2003, էջ 406:

քրիստոնեաներին մկրտութեան պատրաստելու համար: Ժողովածուն բաժանուած է երկու խմբի. առաջինը քրիստոնէական վարդապետութեան սկզբունքների բացատրութեանը կամ մեկնութեանը նուիրուած նախապատրաստական 19 քարոզներն են՝ ուղղուած Զատկի ճրագալոյցին մկրտութիւն ընդունողներին, իսկ երկրորդը՝ 5 քարոզներն են՝ նուիրուած Մկրտութեան, Դրոշմի, Հաղորդութեան խորհուրդների կատարման կարգին եւ ս. Պատարագի արարողութեանը»<sup>21</sup>:

Ինքը՝ Մարկոս գրիչը, կարեւորում է այդ ձեռագիրն իբր «տղանոց դաստիարակելով ի մանկութենէ, այսինքն յանգիտութենէ ճշմարտութեանն Աստուծոյ, Երկնէ աւազանաւն եւ առեալ սնուցանէ աւրինաւք եւ մարգարէեւք, տեղեակ կացուցանէ յաւիտենական անսկզբնութեան եւ մի իշխանութեան Սուրբ Երրորդութեանն մինչ ի կատարել գիտութիւն փրկութեանն Քրիստոսի զարարածս եւ զմիւսանգամ գալուստ Փրկչին զդատաստանն եւ գյաւիտենականն պսակ եւ կամ տանջանս ընդունել որք զինչ վաստակեցին, եւ կատարել զամենայն մարմին եկեղեցւոյ յայր կատարեալ կանգնէ»<sup>22</sup>:

Մի խօսքով, Կիւրեղ Երուսաղէմցու այդ աշխատութիւնը պէտք է որ բաւականին պահանջուած լինէր իսլամական ծանր լուծը խորտակող Հայաստանի համար, քանի որ գալիս էին նոր ժամանակներ, երբ քրիստոնէական պաշտամունքը, արարողութիւններն ու խորհուրդները կատարուելու էին լիարժէք կերպով, համարձակօրէն, մի բան, որը եկեղեցուց պահանջում էր նաեւ մեծ հայրենասէր Զաքարէ ամիրսպասալարը: Բացառուած չէ, որ

21 «Քրիստոնէայ Հայաստան» հանրագիտարան, էջ 496-497:

22 Յիշատակարանք ձեռագրաց, էջ 595. Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 282:

սպասուած էր բունի իսլամացած հայերի դարձ հարազատ եկեղեցու գիրկը: Ծիշտ է՝ ս. Գրիգոր Լուսաւորչի կանոնախմբի Ի կանոնը («Վասն անապատականաց») արգելում էր անապատականներին մկրտութեան ու պսակի խորհուրդներ կատարել՝ դրանք համարելով առաջնորդների գործ<sup>23</sup>, բայց այդ ձեռագիրը անհրաժեշտ էր լինելու քաղաքների եւ գիւղերի եկեղեցիների քահանաներին:

Ուշադրութեան արժանի է այն փաստը, որ Մարկոս գրիչը, ինչպէս ինքն է յայտնում յիշատակարանում, ձեռագիրն ընդօրինակել է «յաղնիւ աւրինակէ, զոր Սարկաւագ քահանայ, սպասաւոր սուրբ կաթողիկէի մեծի որ յԱնի, ի բազմաց աւրինակաց, ի ձեռն եւ այլոց գիտնականաց զաւկտակարան առեալ հաւաքեաց ի մի գիր, եւ շարագրեաց իւրով ձեռամբ ի գիրալուր մտաց եւ գիտութեան, զոր սխալեալ թիւրեցին անհանձարութեամբ գրիչք, որ միայն ողորկութեան գրի ուշ եղեալ եւ ոչ ստուգութեան մտաց եւ բանից, ըստ աւրինակի չար խոհակերի, անընդել գոլով տրոհութեանց»<sup>24</sup>:

Այստեղ յարկ է կանգ առնել մի կարեւոր հանգամանքի վրայ: Ա. Գ. Աբրահամեանն այս Սարկաւագին նոյնացնում է միջնադարի նշանաւոր աստուածաբան, փիլիսոփայ, տոմարագէտ Յովհաննէս Իմաստասէր Սարկաւագի հետ<sup>25</sup>, ով երկար տարիներ ապրել ու գործել է Անիում, եղել է մայրաքաղաքի Մայր տաճարի աւագերէցը<sup>26</sup>: Յայտնի է, որ նա վախճանուել է

23 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, աշխ. Վ. Յակոբեանի, Երեւան, 1964, էջ 243, 247:

24 Յիշատակարանք ձեռագրաց, էջ 595. Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 282:

25 Տե՛ս Ա. Գ. Աբրահամեան, Յովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւնը, Երեւան, 1956, էջ 126:

26 «Քրիստոնէայ Հայաստան» հանրագիտարան, էջ 631:

1129 թ.<sup>27</sup>, մինչդեռ Մարկոսի ձեռագրի յիշատակարանից այն է մակաբերում, որ կրօնաւորն անձամբ ծանօթ է Սարկաւագ քահանային եւ նրանից է հայթայթել բնօրինակը՝ արտագրելու համար: Բացի այդ, յիշատակարանում նշուած չէ Սարկաւագի Յովհաննէս անունը:

Անիում Ն. Մառի գլխաւորած պեղումների ժամանակ 1913 թ. Սարկաւագի կոչուած եկեղեցու<sup>28</sup> տարածքից յայտնաբերուել է մուտքի հետեւեալ արձանագրութիւնը.

Ի ԹՈՒԻՆ: ՈՅ: (1151) ԵՄ՝ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԱՅԱՆԱՅ, ՉԱՅՍ ԾԵՐԱՅԵԱԼ ՏԱՃԱՐՍ ՍՐԲՈՅՆ ՍԱՐԳԸՍԻ ՎԵՐԸՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՅԻ Ի ՅԸՄԱՆԵ...<sup>29</sup>:

Ամենայն հաւանականութեամբ, սրա որդին է այն նուիրատուն, ով 1233 թ. Խծկոնքի վանքում թողել է վիճագիր յիշատակութիւն՝ հետեւեալ սկզբնահատուածով. «...Ես՝ Աբրահամ երէց, որդի Սարկաւագ քահանայի, թոռն Սամուէլ երիցոյ Անեցի...»<sup>30</sup>: Բացառուած չէ, որ Սարկաւագը ժամանակագիր Սամուէլ Անեցի քահանայի որդին լինի<sup>31</sup>. պատմագիրը կոչուել է նաեւ Սամուէլ Երէց (ապրել է մօտ 1100/05-1185/90 թթ.):

27 Տե՛ս Առյճ տեղում:

28 Կարծում եմք՝ եկեղեցու անունն ընտրուած է պայմանականօրէն, մինչդեռ այն իրականում, ինչպէս վիճագրում է յիշատակուած, պէտք է կոչուի Ս. Սարգիս:

29 Դիւան հայ վիճագրութեան, պրակ I, Անի քաղաք, կազմեց Յ. Օրբէլի, Երեւան, 1966, էջ 56 (այսուհետեւ՝ Դիւան):

30 Վիճակաւ տարեգիր, ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, կազմեաց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 76: Այս արձանագրութիւնը յիշատակում է Գաւա Լ. Աճառեանը՝ յղելով՝ Ղ. Ալիշան, Ժիրակ, Վեմետիկ, 1881, էջ 128 (տե՛ս Լ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ, Երեւան, 1948, էջ 462):

31 Տե՛ս Կ. Մաթեոսեան, Անի, եկեղեցական կեանքը եւ ձեռագրական ժառանգութիւնը, Ս. Լէւնիսովի, 1977, էջ 128-129:

Պատմագիրն աշակերտել է նշանաւոր Յովհաննէս Սարկաւագին (1045/50-1129) եւ հաւանաբար իր ուսուցչի պատուին էլ անուանակոչել է որդուն: Յայտնի է, որ Սամուէլ Անեցին եղել է Անիի Կաթողիկէ եկեղեցու քահանայ<sup>32</sup>: Ստացում է, որ այդ հոգեւոր պաշտօնում հօրը յաջորդել է որդին, ով նոյնպէս գրելու ձիրք ունէր, զբաղւում էր մատենագրութեամբ: Հետաքրքիր է, որ Անիի Մայր տաճարի 1286 թ. արձանագրութիւնում որպէս այդ Կաթողիկէի առաջնորդ յիշատակուած է եւս մէկ Սարկաւագ<sup>33</sup>, որը ամենայն հաւանականութեամբ Խծկոնքի 1233 թ. նուիրատուական վիճագրի Աբրահամ երէցի որդին էր, Սարկաւագ քահանայի թոռը եւ Սամուէլ Անեցու ծոռը:

Հետաքրքրութիւն է ներկայացնում նաեւ Մարկոս գրչի ընդօրինակած առաջին ձեռագրի՝ ձառընտիրի յիշատակարանը: Ստացողը Մարկոսն է, գրիչները՝ ինքն ու եղբայրը՝ Մխիթարը, ընդ որում՝ «առաջինը անհամեմատ աւելի վարժ, գիտուն եւ յաջող գրիչ է, քան երկրորդը»<sup>34</sup>:

Յիշատակարանում Մարկոսը յայտնում է, որ Հրոտից ամսի 1-ին (առանց տարեթիւր նշելու), երբ առաջին Ծննդեան պահանջ էր, Սաղմոսավանքի Քարանձախ անապատի կրօնաւորների մասին Դուրնում չարախօսում են՝ իբր նրանք մի գողի հաց են տուել: Դրանից յետոյ թուրքերի հեծեալ գօրքը ձմռան մի օր յանկարծակի խուժում է մենաստան եւ ձերբակալում տարբեր խցերում բնակուող հինգ ճգնաւորներին՝ Մարկոսին, Մխիթարին, Կիրակոսին, Պողոսին եւ Ստեփանոսին: Մարկոսի այս յիշատակութիւնը՝ իւրաքանչիւրի՝ առանձին խցում ճգնելու վերաբերեալ,

32 Տե՛ս «Քրիստոնէայ Հայաստան» հանրագիտարան, էջ 884-885:

33 Տե՛ս Դիւան, պր. I, էջ 36:

34 «Արարատ», 1896, թիւ 9, էջ 439, Գաւա՝ Յիշատակարանք ձեռագրաց, էջ 507:

ակնարկ է առ այն, որ թէեւ իրենք ապրում են նոյն մենաստանում, բայց իրականում դասում են միայնակեաց անապատական ճգնաւորների շարքը:

Գրող, քարանձաւագէտ է. Սարգսեանն իր գրքում պատկերաւոր կերպով, գեղարուեստորէն նկարագրում է Քարանձաւի անապատի ճգնաւորների քարայրային կացարանները. «Նրա առաջին խուցը մի գեղեցիկ սենեակ էր, որ լայն բացուածքով նայում էր առուի ափին փռուած մարգագետինին: Անկիւնում քարէ նստարանն էր: Այստեղ նստել է դրա երբեմնի տէրը եւ խորհել աշխարհի ունայնութեան մասին: Սենեակից չորեքթաթ մտայ մի գմբեթածեւ առաստաղով խուց, այնտեղ միայն ծնկաչոք կարելի էր կանգնել: Ճգնարաններում հանդիպող այդպիսի կլոր խցերին մենք աղօթքի խուց պայմանական անունն ենք տուել: Դիմացը երկարաւուն խուցն էր, ուր մի հոգի կարող էր ապրել:

Ճեղքից ընկնող լոյսը դեղին տուֆի մէջ փորած գողտրիկ քարանձաւը թաղել էր ծիրանագոյն աղջամուղջի մէջ»<sup>35</sup>:

Սելջուկներն առգրաւում են նաեւ ընդօրինակուող ձեռագիրը: Ապա ձերբակալուածներին, բացառութեամբ Մարկոսի, տանում են Դուին (ինչպէս ինքն է ասում. «յաղագս տկարութեան իմոյ, զի Ա (1) ոտս կարճեալ էր եւ ոչ կարէի ընթանալ»<sup>36</sup>):

Դուինում գերուած կրօնաւորներին նախ փայտի վրայ են բարձրացնում, ապա բանտարկում եւ ենթարկում խոշտանգումների, որից յետոյ համաձայնում են բաց թողնել նրանց 60 դահեկան փրկագնի դիմաց: Դուին գնացած ու այնտեղ մէկ ամիս պանդխտութեան մէջ դեգերող Մարկոսին յաջողում է բազում նեղութիւններով ետ

35 Է. Սարգսեան, Քարանձաւները բացում են իրենց գաղտնիքները, Երեւան, 1989, էջ 120-121:

36 «Արարատ», էջ 438. Յիշատակարանը ձեռագրաց, էջ 509:

զնել նաեւ ձեռագիրը: Վերագառնալով Քարանձաւի անապատ՝ Մարկոսն ու Մխիթարը շարունակում են ձեռագրի ընդօրինակումը եւ աւարտելուց յետոյ նուիրաբերում են այն Սաղմոսավանքին: Դրա դիմաց գրիչները պատուիրում են տարին մէկ անգամ կատարել երեք ժամ պատարագ: Այս փաստն առանձնայատուկ ուշադրութեան է արժանի այն պատճառով, որ պատարագամերի մատուցումը պատուիրուել է կատարել ս. Յակոբի տօնին: Աւելորդ է նաեւ համարում յիշեցնել, որ տօնը վերաբերում է համաքրիստոնէական սուրբ Յակոբ Մծբնացուն (Դ դ.), ով բարձրացել է Արարատ լեռը՝ «Նոյեան տապանը գտնելու, բայց Մասիսի լանջերին յոգնել է եւ ննջել: Ըստ աւանդութեան, Աստուծոյ հրեշտակը նրան մատուցել է Նոյեան տապանից փայտի մի կտոր: Այնտեղ, որտեղ Յակոբ Մծբնացին հրեշտակից ստացել է Նոյեան տապանի կտորը, հիմնուել է Ակոսիի Ս. Յակոբ վանքը. այստեղ էլ պահուել են Յակոբ Մծբնայ հայրապետի մատի ոսկրը եւ Նոյեան տապանի փայտի կտորը՝ միմեանց շղթայով ամրացուած (այժմ Յակոբ Մծբնեցու Աջի հետ այդ փայտի կտորը պահուում է Ս. Էջմիածնի վանքում)»<sup>37</sup>: Խնդիրն այն է, որ, ըստ աղբիւրների, սուրբ Յակոբ Մծբնացու Աջը ԺԳ-ԺԸ դդ. պահուել է Սաղմոսավանքում: Արդեօք Աջն աւելի վաղ չի՞ եղել Քարանձաւի անապատում, որտեղ յատուկ պատուել ու մեծարուել է այդ սուրբը, եւ այդտեղից չի տարուել Սաղմոսավանք:

Զարմանալի է, որ Մարկոս Միոտանի գրիչն, ի տարբերութիւն միւս ձեռագրի, չի թուագրել այս մէկը: Բայց դա չի խանգարել այդ ձեռագրի յիշատակարանի առաջին հրատարակիչ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան, հայագէտ Գալուստ Տէր-Մկրտչեանին (1860-1918), ով յայտնի է

37 «Քրիստոնէայ Հայաստան» հանրագիտարան, էջ 521:

Միաբան կեղծանունով, փորձել որոշել գրութեան ժամանակը: Բնագրագէտ-աղբիւրագէտը գտնում է, որ «այդ չէր կարող կանուխ լինել Հայոց ՈժՁ (1167) եւ ՈժԹ (1170) թուականներից: Այդ թուերն յիշուում են ճառընտիրի (ընդօրինակուած ձեռագրի - Ա. Մ.) վերջում գտնուած վկայաբանութեանց մէջ Գօշի անունից, կարելի էր հետեւեցնել, որ այս ճառընտիրը ՈԿԲ (1213) թուականից (Գօշի մահուան թուականը) յետոյ է գրուած: Բայց այդ անկարելի է, որովհետեւ Դուինը յիշուում է այլազգիների ձեռքում: Նոյնպէս եւ Սաղմոսավանքը: Իսկ Զաքարէ սպասալարը տիրեց Սաղմոսավանքին եւ շրջականներին 1200 թուին (դա արձանագրութեան փորագրութեան թուականն է, իսկ այդ տարածքները, ինչպէս արդէն նշել ենք, Զաքարեաններն ազատագրել են 1191-1196 թթ. - Ա. Մ.), որից առաջ է անշուշտ ճառընտիր գրութեան ժամանակը, երբ Սաղմոսավանքը դեռեւս Դուինի իշխանութեան սահմաններումն էր (Դուինը Զաքարեանները գրաւել են 1203 թ. - Ա. Մ.):

Բայց կարելի է դեռ աւելի եւս սեղմել այս 30 տարուայ անջրպետը (1170-1200), աւելի մօտենալով ճառընտիր գրութեան բուն տարեթուին: Վերեւն առաջ բերուած գերեզմանութեան յիշատակարանում ասուած է. «Յամսեանն հրոտից, որ աւր Ա էր, եւ առաջին ծնընդեան պահոցն, եհաս բարկութիւն սաստիկ աստուծոյ եւն: Այս խօսքերից հետեւում է, որ ճառընտիրս եւ նրա գրիչների գերեզմանութեան ձմեռը - զի ժամ էր ձմեռաին - մի այնպիսի տարի էր, որ Ծնընդեան պասի առաջին օրը ընկնում էր հրոտից ամսի մէկին: Ուրիշ խօսքով, բուն Ծնունդը, յունուարի 6-ը, գալիս էր հրոտից 8-ին, իսկ յունուարի մէկը, այն է՝ նոր տարին՝ հրոտից երեքին: Իսկ նաասարգի մէկը կը հանդիպէր 32 օր յետոյ (27 օր հրոտից ամսից, 5 օր աւելեաց=32), ուրեմն՝ փետրուարի երեքին:

Այսպիսով, ուրեմն այս Բ ճառընտիր գերեզմանութեան տարին, - երբ կիսից աւելին գրուած էր (318 թերթ), մնացածն էլ մի ամսից յետոյ շարունակուեց գրուել, - մի այնպիսի տարի էր, որ Առասարդի մէկը հանդիպում էր փետրուարի երեքի օրը:

Այդպիսի տարիներին են 1185-1188 քառամեակը, ուրեմն եւ այդ թուերին միայն կարող էր գրուած լինել այս ճառընտիրը, - Հայոց ՈՒԴ-ՈՒԷ թուերին»<sup>38</sup>:

Մեր կողմից յաւելենք, որ այս թուականները, այդ ժամանակաշրջանն առհասարակ, շատ խօսու են. ընթանում էր հայ-վրացական զինակցութեամբ պատերազմ ընդդէմ սելջուկների: Հիւսիսարեւելեան Հայաստանն արդէն մաքրուած էր սելջուկներից, օրակարգում Շիրակ-Արագածոտնի ազատագրումն էր: Հարկաւոր էր մանրակրկիտ կերպով մշակել արշաւանքը, հետախուզել թշնամուն:

Ահա, մի այսպիսի պատերազմական ժամանակաշրջանում Սաղմոսավանքի Քարանձաւի անապատից Քառասունք անունով կրօնաւորը հոգ է տանում, որ ձեռագրի ընդօրինակման համար թուղթը բերուէր Տփլիսից, իսկ կազմի օղակներն ու կոճակները՝ Անիից<sup>39</sup>: Ի՞նչ է սա նշանակում: Հասկանալու համար պէտք է պատկերացնել այն համաժողովրդական ոգեւորութիւնը, որ պատճառում էին համայն հայութեան քաղաքական, ռազմական յաջողութիւնները, յաղթանակները թէ՛ Կիլիկիայում, թէ՛ հիւսիսարեւելեան Հայաստանում: Սելջուկեան աւելի քան մէկդարեայ ծանր լծի վերջնական թօթափումն օրախնդիր հարց էր: Մեծ էր հայ եկեղեցու եւ հոգեւորականութեան դերը համազգային յաղթանակներում: Մխիթար Գօշը, Գրիգոր Տուտեղդին, Դաւիթ Քոբայրեցին, Պետրոս Ականատեսը, Հայրապետ վարդապետը եւ ու-

38 Տե՛ս «Արարատ», 1896, թիւ 9, էջ 439:  
39 Տե՛ս նոյն տեղում, էջ 438:

րիչներ քաջալերում, ոգեշնչում էին ազատագրական շարժումը, յոյս ու հաւատ ներշնչում նրա յաղթական աւարտի հանդէպ: Այդ համընդհանուր գործընթացներից չէին կարող անմասն մնալ Սաղմոսավանքի ձորի քարանձաւներում ծպտուած կրօնաւորները: Նրանք պէտք է իրենց նպաստը բերէին յաղթանակի գործին: Ինքնին հասկանալի է, որ մի գողի հաց տալու համար սելջուկները չէին ձերբակալի ու տանջանքների ենթարկի անվնաս ճգնաւորները՝ քաջ հասկանալով, որ կրօնաւորներն այդ քայլին կարող էին դիմել քրիստոնէական մարդասէր եւ ներողամիտ ոգով թելադրանքով: Աւազակին կերակրելու մեղադրանքն ընդամէնը պատրուակ է եղել:

Քանի որ ձառընտիրի ընդօրինակման ժամանակ Կենտրոնական Հայաստանում դեռեւս իշխում էին սելջուկները, հետեւապէս Մարկոս գրիչը զգուշացել է, չի յայտնել իսկութիւնը: Նրա ընկերներն էլ, մէկ ամիս տոկոսութեամբ դիմանալով տանջանքներին, լռել են: Բայց Մարկոսը յիշատակարանում ակնարկում է, որ իրենք, մերժելով աշխարհիկ կեանքը եւ բնակուելով անապատում, «ո՛չ գործելով զգործ անապատի, հալածեալ եղէաք»<sup>40</sup>: Ոչ ճգնաւորական, կրօնական գործով զբաղուելու ակնարկի տակ չպէտք է հասկանալ գողին կերակրելը: Հնուց ի վեր թէ՛ Հայաստանում, թէ՛ համայն քրիստոնէական աշխարհում գոյութիւն ունէին վանքեր, մենաստաններ, որոնք հոգ էին տանում մուրացկանների, աղքատների, խեղճերի, կարիքաւորների, սովեալների մասին: Հետեւապէս՝ զբաղուել են այնպիսի գործերով, որ արժանացել են սելջուկեան իշխանութիւնների ուշադրութեանը: Տփլիս գնալն<sup>41</sup> ու այնտեղից ձեռագրի համար

իրը ընտիր թուղթ բերելը, նաեւ՝ Մխիթար Գօշի հետ տեսակցելը (ինչը յուշում է ձառընտիրում նրա ներքողի առկայութիւնը) այլ բան են ենթադրել տալիս: Մեր կարծիքով՝ հէնց այս պատճառով են ձերբակալել ճգնաւորներին, առգրաւել ընդօրինակուող ձեռագիրը: Սակայն կրօնաւորներին բանտարկելով, մէկ ամիս շարունակ դաժանաբար խոշտանգելով, հաւանաբար նաեւ գրաքննութեան ենթարկելով ձեռագիրը եւ չկարողանալով ոչ մի յանցանշան գտնել՝ սելջուկները ստիպուած են եղել բաց թողնել նրանց, վերադարձնել թերի ձառընտիրը՝ բաւարարուելով դրամական տուգանքով: Կրօնաւորներից յատկապէս Մարկոս կուսակրօն քահանան ոչ մի կասկած չի յարուցել: Սելջուկներն անգամ չեն ձերբակալել նրան՝ խուսափելու համար միտտանի ճգնաւորին Սաղմոսավանքից Դուին տանելու դժուարութիւնից: Մինչդեռ թշնամու համար ամենավտանգաւորը կարող էր Մարկոս Միտտանին լինել: Չնայած իր անդամալոյծ վիճակին՝ Մարկոսը ճգնակից ընկերներին օգնելու եւ ձեռագիրը փրկելու համար գնում-հասնում է Դուին, որտեղ իրեն պանդուխտ, օտարական էր զգում. հայոց երբեմնի այդ փառահեղ մայրաքաղաքում այլազգիները, այլադաւանները մեծ թիւ էին կազմում: Տարիներ անց՝ 1194 թ., Մարկոսին տեսնում ենք Անիում: Արդեօ՞ք մեծ ու նշանաւոր քաղաքամայր ուղեւորութիւնը միայն ձեռագրի օրինակը բերելու համար էր կատարուել<sup>42</sup>, թէ՞ նաեւ հետախուզութեան նպատակով. «Հայկական եւ վրացական զօրքերը մտան Արագածոտն գաւառն եւ գրաւեցին Անիի մատոյցները... 1199 թ. Անին վերջնականապէս ազատագրուեց»<sup>43</sup>:

գՎրաց տուն՝ Էօթն ատր ճանապարհ է» (Ա. Ա. սատրեան, Կարթի, Երեւան, 2010, էջ 65):

42 Տե՛ս Թիշատակարանը ձեռագրաց, էջ 595, Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 282:

43 ՀԺՊ, III, էջ 534:


40 Նոյն տեղում:  
41 Ա. Ասատրեանը, յղելով Ղ. Ալիշանին, մէքքերում է ԺԴ-ԺԵ դդ. պատմիչ Մխիթար Ապարանեցու հետեւեալ խօսքերը. «Ի Կարթոյ միջէտ

Ամփոփենք: Սաղմոսավանքից Յովհաննավանք ձգուող Քասաղի կիրճի Սերկելիի ձորի Վասակամուտի հատուածում գետի ձախ ափի լանջի երկյարկանի քարանձաւային համալիրում, ԺԲ դ. կէսին հիմնադրուել է կրօնաւորների անապատ: Այստեղ կրօնաւորները զբաղուել են կրթական գործունէութեամբ, ընդօրինակել ձեռագրեր: Մեզ է հասել Մարկոս Կաղզրչի կողմից արտագրուած երկու ձեռագիր՝ 1185-1188 թթ. եւ 1194-1195 թթ.: Այդ թուերին Հայաստանի կենտրոնական մասում իշխում էին թուրք-սելջուկները: Ձեռագրերի յիշատակարաններից մակաբեր-

ւում է, որ Քարանձաւի անապատի կրօնաւորները ոչ միայն զբաղուել են հոգեւոր գործունէութեամբ, այլեւ նպաստել են Զաքարեան հայ-վրացական զօրքերի ազատագրական յաղթարաշաւին՝ յատուկ քարոզչական, հետախուզական առաջադրանքներ կատարելով: Սելջուկները ձերբակալել են Քարանձաւի անապատի մի խումբ կրօնաւորների, տանջանքների ենթարկել, բանտ նետել, բայց յանցանշաններ չգտնելով՝ մէկ ամիս յետոյ ազատ են արձակել: Դրանից յետոյ էլ կրօնաւորները շարունակել են ազատագրական պայքարին նպաստող իրենց գործունէութիւնը:




Քարանձաւային համալիրը բնապատկերում



Քարանձաւի երկրորդ յարկ տանող ուղի




Համալիրի մեծ քարայրը՝ կից փոքր սենեակի մուտքով



Ս. Աստուածածին վիմափոր եկեղեցու մուտքը

40 Նոյն տեղում:  
41 Ա. Ասատրեանը, յղելով Ղ. Ալիշանին, մէքքերում է ԺԴ-ԺԵ դդ. պատմիչ Մխիթար Ապարանեցու հետեւեալ խօսքերը. «Ի Կարթոյ միջէտ



Մարկոսի արձանագրությունը

### The Foundation and Activity of the Saghmosavanq Qarandzav Skit (Hermitage) in the XII Century (Summary)

In the XII c. there was founded the Skit for monks which is situated in the two-storey cave on the left bank of the Qassakh River, in the part called Vasakamoot that stretches from Saghmosavanq to Hovhannavanq along the Qassakh Gorge. Here the monks were engaged both in the educational activity and copying the manuscripts. There were preserved two manuscripts copied by the monk called Marcos Kaghgrich. They were copied correspondingly in 1185-1188 and 1194-1195. In that period the Turk-Seljuks were ruling over the central part

of Armenia. The entries of the manuscripts testify to the fact that the monks from Qarandzav Skit did not only carry out spiritual activities but also favored to Zakarian Armenian-Georgian liberation campaign carrying out special preaching and reconnaissance activities. A group of monks from this Skit was caught by Seljuks, they were thrown into the prison and subjected to torments. But later they were let free because of the lack of evidence. The monks continued to carry out the activities thus favoring to the liberation struggle.

### ԱՆԻԻ ԿՈՐԾԱՆՄԱՆ ԱՒԱՆԴԱԶՐՈՅՑԸ (ԲԱՆԱՒՈՐ ՊԱՏՈՒՄԻՑ ԳՐԱՒՈՐ ՄՇԱԿՈՒՄ)

Սարգիս Բալդարեան

Անիի՝ որպէս միջնադարեան Հայաստանի նշանաւոր կենտրոնի դերակատարութեան կարեւորութիւնը գիտակցուել է ինչպէս քաղաքի տնտեսական ու մշակութային զարթոնքի ականատեսների կողմից, այնպէս էլ Անիի աւերմանն ու ամայացմանը յաջորդած ժամանակահատուածում: Մարտիրոս Ղրիմեցու (մօտ 1620-1693 թթ.) կողմից տրուած «քաղաքն մեծ Անի, մերս ազգի պարծան»<sup>1</sup> ուշագրաւ բնորոշումը լիովին արտացոլում է լքուած քաղաքի փառաւոր անցեալի արժեւորումը անգամ ժէ դարում: Ուշմիջնադարեան ժամանակաշրջանում Անիի նկատմամբ չմարող հետաքրքրութիւնը դրսեւորուել է նաեւ դէպի քաղաքի աւերակները կատարուած բազմաթիւ ուղեւորութիւնների տեսքով:

Նկատառելի է, որ պետականութեան բացակայութեան պայմաններում աւելի էր ընդգծուած Անիի՝ որպէս բուն Հայաստանում ստեղծուած վերջին թագաւորութեան մայրաքաղաքի նշանակութիւնը: Բագրատունիների Հարստութեան կործանումը մտազուգորդում էր պետականութեան տեւական բացակայութեան հետ: Այդ մտայնութիւնը Անիի՝ իբրեւ Բագրատունեաց Հայաստանի կենտրոնի դերակատարութիւնը Հարստացում էր պետականութեան խորհրդանիշի գործառոյթով<sup>2</sup>: Ուստի ամա-

յացած քաղաքի նկատմամբ առաջացած հետաքրքրութիւնը ոչ միայն արդիւնքն էր երբեմնի ծաղկուն վիճակի, այլ նաեւ պայմանաւորուած էր Հայութեան քաղաքական ճակատագրի ասպարէզում ստացած առանձնայատուկ կարգավիճակով:

Հայութեան կեանքի տարբեր հարթութիւններում Անիի ունեցած ուշագրաւ դերակատարութեան ներկայացումը օրինաչափօրէն առաջ է բերում հետաքրքրական հարցադրում՝ քաղաքի կարեւորութեան գիտակցումն ու նրա մասին պատկերացումներն ինչպիսի՞ արտացոլում են ստացել ժողովրդական ընկալումներում: Խնդրի պարզաբանումը, որն էլ հէնց սոյն աշխատանքի առանցքն է կազմում, երեւան է հանում Անիի պատմութեան շուրջ ձեւաւորուած ժողովրդական պատկերացումների երկու ուղղութիւն: Դրանցից մէկի համաձայն՝ անեցիների խեղուած կենսակերպն ու նրանց շրջանում տիրող անբարոյ բարքերն այնպիսի ահազանացող չափերի էին հասել, որ Աստուած իրավիճակի յաղթահարումը տեսաւ քաղաքը երկրաշարժով աւերելու մէջ: Անիի կործանման համանման մեկնաբանութեան մէջ առանձնակի կարեւորութիւն ունէր քաղաքի անիծուած լինելու գաղափարը. անեցիներին մոլորութիւնից դարձի բերելու առաքելութիւնն ստանձնած միջնորդը լիակատար անյաջողութեան մատուցելուց յետոյ անիծում է քաղաքը, ինչին էլ յաջորդում է աստուածային պատիժը երկրաշարժի տեսքով: Փաստօրէն Հայ Հասարակութեան հաւաքական մեղաւորութեան գաղափարը, որի արմատները հասնում են մինչեւ վաղ միջնադար, տեղայնացուել է՝ հիմք ծառայելով Անիի ամայաց-

1 Ա. Մարտիրոսեան, Մարտիրոս Ղրիմեցի, Երեւան, 1958, էջ 145:  
2 Համանման դիտարկումների շուրջ հմմտ. տե՛ս նաեւ P. Tchobanian, Ani et son mythe (XIIIe-XIXe siècles), Ani, Capitale de l'Arménie en l'an mil, Paris, 2001, p. 277. Բ. Կովաչ, Հայոց մայրաքաղաք Անի՞ որպէս յիշողութեան վայր (lieu de mémoire), «Պատմութիւն եւ հասարակագիտութիւն», հտ. 1, Երեւան, 2015, էջ 102: